ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

02.11.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Ռ.Մարգարյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Լ.Աբրահամյանը- մարզպետի խորհրդական
Է.Կոջոյանը - մարզպետի օգնական
Հ.Հակոբյանը –մարզպետի օգնական
Մ.Դալլաքյանը –գլխավոր քարտուղար
Ս.Մակարյանը, Վ.Եղիազարյանը, Վ.Ղարսայանը, Ա.Երիցյանը, Մ.Խեչումյանը, Լ.Մաթոսյանը, Ա.Հակոբյանը, Ա.Թումանյանը, Ա.Մալոյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի տեղակալներ և աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

Ելույթ ունեցավ ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանը, նա ներկայացրեց նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ Լոռու փոխմարզպետներ Ա.Ղարիբյանը և Ռ.Մարգարյանը, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. **ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ռ.Մարգարյանին և աշխատակազմի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյանին՝**

Համայնքների ղեկավարների մասնակցությամբ կազմակերպել աշխատանքային քննարկում՝ սուբվենցիոն ծրագրերի ներկայացման ընթացքի, խնդիրների և սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների կատարման հարցերի վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանին՝

2-օրյա ժամկետում ներկայացնել ամփոփ տեղեկատվություն քաղաքացիների ընդունելության արդյունքների, բարձրացված խնդիրների և դրանց լուծման ընթացքի վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Հ.Ադամյանին, աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Երիցյանին՝

Ներկայացնել համեմատական վերլուծություն և տեղեկատվություն Լոռու մարզի օլիմպիադաների մասնակիցների և կամավոր ատեստավորման համար դիմած մանկավարժների վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Ներկայացնել համեմատական տեղեկատվություն մարզում իրականացվող բուսաբուծության աջակցության ծրագրերի, մասնավորապես՝ ինտենսիվ այգիների հիմնման և դրանց գործունեության արդյունքների վերաբերյալ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-11-02 12:47:29 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արծ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /2-10-24/